

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալների հրապարակում

Վիճակագրության կարևորագույն նպատակներից մեկը վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկին համապատասխանող վիճակագրական տեղեկատվություն տրամադրումն է և նրանց հետ երկարաժամկետ գործընկերություն ապահովումը: Վիճակագրության կատարելագործման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումն է: Տեղեկատվության տարածման գործընթացը պայմանավորված է պաշտոնական վիճակագրության հստակ մշակված ռազմավարությամբ, որակավորված մասնագետներով և տեղեկատվատեխնոլոգիական ապահովվածությամբ:

Սույն ռազմավարությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման (ՀՀ ԳՀՀ) վիճակագրական արդյունքների 2016 թվականի ընթացքում նախատեսված հրապարակմանը և տարածմանը:

ԳՀՀ տվյալների հրապարակման և տարածման աշխատանքները հիմք են ծառայելու ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) վիճակագրական տեղեկատվության տարածման ռազմավարության իրականացման համար՝ ապահովելով երեք հիմնական մարտավարություն.

- ✓ ՀՀ ԱՎԾ համար կայուն ինքնության ապահովում,
- ✓ ՀՀ ԱՎԾ հստակ դիրքորոշում՝ որպես ժամանակակից կազմակերպություն,
- ✓ սպառողների կարիքների առավել լիարժեք բավարարման նպատակով մարզային և տարածքային մակարդակներում հարմարեցված կամ ընտրակայելի ռեսուրսների ապահովում:

ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների տարածումը կնպաստի ՀՀ ԱՎԾ տեղեկատվության տարածման ռազմավարության գերակա նպատակներն իրականացնելուն, մասնավորապես՝ ՀՀ ԱՎԾ-ին տվյալներ տրամադրողների (ռեսպոնդենտների) և սպառողների (օգտագործողների) սերտ համագործակցությանը:

**ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների հրապարակման և տարածման գործընթացը
կազմակերպելու համար ձևավորված հաղորդակցության գործընկերներ**

Ներքին գործընկերներ	Արտաքին գործընկերներ
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ պարոն Գագիկ Անանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար պարոն Սերգո կարապետյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ պարոն Գագիկ Գևորգյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ պարոն Հրաչյա Ծպենցյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ տիկին Անահիտ Սաֆյան	ՄԱԿ-ի Զարգացման գործակալության ծրագրի ղեկավարի ժ/պ տիկին Իռենա Գրիգորյան
Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության պետ Վարդան Գևորգյան	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչներ
Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության տվյալների մշակման և դասակարգումների բաժնի պետ տիկին Գայանե Խաչատրյան	«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի հանրային կապերի մասնագետ պարոն Սոս Ավետիսյան
Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Արսեն Ավագյան	«ՔԱՐԴ» հիմնադրամի «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի ղեկավար օրիորդ Սոնա Թելունց
Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Վարդանյան	Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ
Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Նարինե Մուշեղյան	Գյուղատնտեսական կազմակերպություններ
Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Նշանյան	ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի ներկայացուցիչներ
Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Աիդա Մարտիրոսյան	Գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ
Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Արմենուհի Առուշանյան	
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային (Երևան քաղաքի) գործակալությունների աշխատակիցներ	

Լուսաբանման փուլեր

Փուլ	Ա	Բ	Գ	Դ
Ամսաթիվ	2016թ. օգոստոս-սեպտեմբեր	2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր	2016թ. դեկտեմբեր (տվյալների հրապարակման ճշգրիտ ամսաթիվը ենթակա է քննարկման)	Մինչև հաջորդ ԳՀՀ արդյունքների հրապարակումը
	Նախապատրաստական փուլ	Նախապատրաստական փուլ	Տվյալների թողարկում, տարածում	Թողարկումից հետո կատարվող գործողություններ, արձագանք
Գործողություններ	Պարզել՝ ով է պոտենցիալ լսարանը (հիմնական սպառողների ցուցակը)	Աշխատանք ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային (ք. Երևանի) գործակալությունների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ մարզպետարանների համապատասխան աշխատակիցների հետ	Զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ-ներ) ներկայացուցիչների հետ աշխատանքի հստակեցում, հարաբերությունների կառուցում (օրինակ՝ հանրային ռադիոն կարող է հանդիսանալ թիրախային խումբ)	Սպառողների համար ԳՀՀ տվյալների հասանելիության ապահովում (թղթային հրապարակումներ, համացանցում նյութերի զետեղում, ինֆոգրաֆիկներ, մամուլի հաղորդագրություններ)
Հաղորդագրության թեման			Գյուղատնտեսական կենդանիներ, թռչուններ	
			Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ և բազմամյա տնկարկների տարածություններ	
			Աշխատուժ (սեռատարիքային կազմ, բաշխվածություն և այլն)	
			Գյուղմթերքների վերամշակում	
			Սարքավորումներ, տեխնիկա	
			Գյուղկոոպերատիվների առկայություն	
Այլ				

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Արտաքին և ներքին լսարանների համար հիմնական ուղերձները հետևյալն են.

- 2014 թվականին իրականացված Գյուղատնտեսական համատարած հաշվառումը (ԳՀՀ-ն) Հայաստանի Հանրապետության պատմության մեջ իրականացված առաջին գյուղատնտեսական հաշվառումն է:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ն իրականացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:
- ԳՀՀ-ն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների, գույք վիճակագրական նպատակներով, հավաքագրման, մշակման, տարածման և դրանց օգտագործման վիճակագրական գործառույթ: Իրականացվելով 10 տարին մեկ անգամ՝ այն անդրադառնում է հողօգտագործմանը և հողի սեփականությանը, գյուղատնտեսական գործունեության բնույթին, արտադրական գործելակերպին, եկամուտներին, ծախսերին և այլն:
- ԳՀՀ-ն կարևոր է, քանզի այն միանման, համակողմանի և անկողմնակալ գյուղատնտեսական տվյալներ տրամադրող միակ աղբյուրն է երկրի յուրաքանչյուր գյուղական համայնքի համար:
- ԳՀՀ տվյալներն օգտագործվում են բոլոր նրանց կողմից, ովքեր համագործակցում են գյուղացիական տնտեսությունների և գյուղական համայնքների հետ՝ տեղական ինքնակառավարման մարմինները, գյուղատնտեսությամբ զբաղվող ընկերությունները, առևտրային ընկերակցությունները և շատ ուրիշներ:
- ԳՀՀ տվյալների հետ աշխատանքը շարունակական գործընթաց է: ՀՀ ԱՎԾ-ն ձգտում է պահպանել հարցաշարի հարցերի հրատապությունը, կազմում է հասցեատերերի ցուցակներ, նախապատրաստում է հետազոտությունների ձևաթղթեր, հավաքագրում, մշակում և ամփոփում է տվյալները՝ օգտագործելով ժամանակակից վիճակագրական գործիքները և արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է կազմում՝ ԳՀՀ յուրաքանչյուր շրջափուլի համար:
- Գյուղատնտեսական հաշվառման լիազորված մարմինը պարտավոր է ապահովել սկզբնական (անհատական) տվյալների գաղտնիությունը (Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին ՀՀ օրենք, հոդված 6, 1-ին կետի 3) ենթակետի):
- Մշակվում և հրապարակվում են միայն ամփոփ տվյալներ: Հիմնական ուղերձները կուղեկցեն լուսաբանման գործընթացին և ներառված կլինեն ՀՀ 2014 թվականի ԳՀՀ բոլոր նյութերում:

ՆԵՐՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ/ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը և ՀՀ ԱՎԾ-ն ընդունում են ԳՀՀ տվյալների թողարկման հիմնական ուղերձները և դրանց տարածման նշանակությունը:
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բոլոր աշխատակիցները ստանում և ընկալում են ԳՀՀ տվյալների թողարկման հիմնական ուղերձները և դրանց տարածման նշանակությունը:
- Անհրաժեշտ է ձևավորել և ընդլայնել գործընկերային կապեր ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների միջև, որը կնպաստի ԳՀՀ տվյալների և արդյունքների տարածմանը, որպես արդյունք՝ ՀՀ ԱՎԾ-ն կլինի գյուղատնտեսական ճշգրիտ, վստահելի և օգտակար տվյալների առաջնային աղբյուր:
- ԳՀՀ արդյունքները պետք է ծառայեն և նպաստեն գյուղացիական տնտեսությունների, հարցվողների, տվյալների սպառողների պահանջների, կարիքների ու շահերի բավարարմանը:

ՆԵՐՔԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Զարգացնել համագործակցությունը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և ԳՀՀ վարչության աշխատակիցների միջև՝ հիմնական լսարան ձեռք բերելու համար ուղերձներ հղելու նպատակով:
- Ստեղծել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների շուրջ ոգևորություն և իրազեկվածություն՝ դրանում աշխուժորեն ընդգրկելով ՀՀ ԱՎԾ համապատասխան աշխատակիցներին:

ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԳՀՀ հաղորդակցության մեկնարկի հայտարարում տեսակապի միջոցով – ՀՀ 2014 թվականի ԳՀՀ հաղորդակցության ռազմավարության մասին պաշտոնապես հայտարարելու համար, ինչպես նաև ուղերձները տարածելու և ոգևորություն առաջացնելու համար ՀՀ ԱՎԾ-ն կկազմակերպի տեսակապ, որը հնարավորություն կընձեռի ՀՀ ԱՎԾ աշխատակիցներին ներկայացնել հաղորդակցության ծրագիրը և նյութերի թողարկումից հետո դրանց օգտագործման ձևերը: Նպատակն այն է, որ ՀՀ ԱՎԾ աշխատակիցներն իմանան ավելին ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների տարածման և հաղորդակցման մասին:
- Փաստաթղթերի նմուշների խմբագրում, մշակում և հրապարակման նախապատրաստում
 - թղթային տարբերակների պատրաստում,
 - էլեկտրոնային եղանակով տարածում,
 - հանդիպումների ընթացքում առավել հաճախակի տրվող հարց ու պատասխանների մշակում:
- Հիմնական ուղերձների ցանկ և հիմնական դրույթներ – Անհրաժեշտ է մշակել համառոտ ուղերձների ցանկ ԳՀՀ գլխավոր ուղերձները լուսաբանելու համար: ՀՀ ԱՎԾ և ՀՀ գուղատնտեսության նախարարության ղեկավարներն իրենց ելույթներում և հաղորդագրություններում հիմնական դրույթները կարող են քննարկել ինչպես տվյալներ

տրամադրողների, այնպես էլ սպառողների, զանգվածային լրատվամիջոցների և այլ հանդիպումների ժամանակ:

- Ցուցադրական վահանակներ – Ձեռնարկել ԳՀՀ վահանակների համալրումը, թարմացնել նյութերի տեսքն ու բովանդակությունը:
- Բուկլետներ – Մշակել և տպագրել ԳՀՀ նյութերի ներկայիս տեսքին ու բովանդակությանը համապատասխանող բուկլետները, որոնք կներառեն տվյալների վերջնական թողարկման մասին համառոտ տեղեկատվություն: Հանդիպումների, շնորհանդեսների, համաժողովների ժամանակ բուկլետները ՀՀ ԱՎԾ կողմից կարող են օգտագործվել որպես տեղեկատվական գործիք՝ ԳՀՀ արդյունքների թողարկման մասին սպառողներին տեղեկացնելու համար:
- Մամուլի հաղորդագրություններ – Նախքան վերջնական հրապարակումները, ՀՀ ԱՎԾ-ն մամուլի հաղորդագրությունների միջոցով պետք է սպառողներին տեղեկացնի ՀՀ ԳՀՀ վերջնական արդյունքների հրապարակման մասին:
- Մեդիա վերապատրաստում – ՀՀ ԳՀՀ վերջնական արդյունքները ճիշտ ընկալելու և լիարժեք հրապարակելու համար անհրաժեշտ է անցկացնել մեդիա ուսուցում՝ ոչ միայն ԶԼՄ-ների շրջանում, այլ նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների (մարզային գործակալությունների և տարածքային բաժինների) ներկայացուցիչների, ինչպես նաև մարզպետարանների աշխատակիցների համար:
- Գործընկերային հանդիպումներ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան աշխատակիցների հետ – ՀՀ ԱՎԾ-ն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը տրամադրելու է ՀՀ ԳՀՀ-ի վերաբերյալ արժեքավոր վիճակագրական տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել նախարարության կողմից իր գործառույթներն իրականացնելիս:

Անհրաժեշտ է պահպանել գործընկերային հարաբերություններ նաև գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց, ինչպես նաև այն կառույցների հետ, որոնք առնչվում են գյուղատնտեսության ոլորտին (օրինակ՝ հասարակական կազմակերպությունները), ուստի շատ կարևոր է, որ այդ հարաբերությունները լինեն շարունակական և կրեն պարբերական բնույթ: Այդ հանդիպումները կարևոր են ինչպես հրապարակվելիք նյութերի քննարկման, հարց ու պատասխանների, այնպես էլ հնարավոր այլ բնույթի պարզաբանումների համար:

Հանդիպումների ընթացքում ցանկալի է ՀՀ ԳՀՀ տվյալների հրապարակման շուրջ ներքին ոգևորություն առաջացնել, խրախուսել աշխատակիցներին մասնակցելու հանդիպումներին, այցելել ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքի «Գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2014» բաժին (տես՝ <http://armstat.am/am/?nid=455> էջը):

ԱՐՏԱՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ/ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Նպաստել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների տարածմանը և ՀՀ ԱՎԾ-ին ներկայացնել որպես գյուղատնտեսական օգտակար տվյալների ճշգրիտ, հավաստի և առաջնային աղբյուր:
- Բարձրացնել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ առցանց ներկայությունը, այդ թվում՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքի «Գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2014» բաժին (<http://armstat.am/am/?nid=455>) այցելությունների քանակը:
- Բարելավել հարաբերությունները տվյալներ տրամադրողների (գյուղացիական տնտեսությունների) հետ և խրախուսել հետագա հաշվառումներին նրանց մասնակցությունը:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների միջոցով ոչ գյուղատնտեսական բնակչության շրջանում բարձրացնել իրազեկությունը գյուղատնտեսության կարևորության մասին:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ-ի տվյալների տարածումը խթանելու համար գործընկերություն կառուցել շահակիցների հետ:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների տարածման գործում ներգրավել գյուղատնտեսական հանրության շահագրգիռ կողմերին:

ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Տվյալների հրապարակման վերաբերյալ ուղերձներն արդյունավետ մատուցելու համար ներգրավել ՀՀ գյուղատնտեսության նախարարության և այլ շահառու մարմինների աշխատակիցների:
- Ամրապնդել ԶԼՄ-ների հետ առկա հարաբերությունները և ձևավորել նոր հարաբերություններ՝ տվյալներ տրամադրողներին (գյուղացիական տնտեսություններին) տարածելու նպատակով:
- Մշակել նոր հարաբերություններ հիմնական (առավել ակտիվ) ԶԼՄ-ների հետ՝ մեծ լսարաններ ապահովելու նպատակով:
- Ակտիվորեն օգտագործել սոցիալական ցանցերը՝ խթանելու համար ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների տարածումը և բարձրացնելու ՀՀ ԱՎԾ տեսանելիությունը և ներկայությունը սոցիալական ցանցերում:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների և դրանց մատչելիության մասին կրթել արտադրողներին և առանցքային այլ շահառուներին:
- ԶԼՄ-ների և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներին խրախուսել օգտագործել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալները:

ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Կայքի թարմացումներ – Շարունակաբար թարմացնել «Գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2014» բաժինը (տես՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքի <http://armstat.am/am/?nid=455> էջը): Բաժնի թարմացումները կարող են ներառել.
 - հրապարակել մամուլի «շնորհակալական» հաղորդագրություններ և նյութեր,
 - ստեղծել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների թողարկման հետհաշվարկի ժամանակացույց,

- ներկայացնել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ կարևորագույն տվյալները հեշտ ընթեռնելի տարբերակով՝ ընդգծելով տարբեր մշակաբույսերը և տարածաշրջանները,
- տեղադրել սոցիալական ցանցերից գրառումներ, թե ինչպես են սպառողներն օգտագործում ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալները և արդյունքները:
- Տվյալների պրոֆիլներ – մշակել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ պրոֆիլների արտաքին տեսքը:
- Հրապարակումների կազմեր, տիտղոսաթերթեր – ՀՀ 2014 թվականի ԳՀՀ համար մշակել համապատասխան դիզայն՝ գունային հստակ դիրքորոշումներով:
- Ինֆոգրաֆիկա – ինֆոգրաֆիկները փաստերի, թվերի տեսողական մեկնաբանություններ են՝ ներկայացված հստակ և դյուրին տեսողական ձևաչափերով: ՀՀ ԱՎԾ-ն կիրառարակի մի շարք ինֆոգրաֆիկներ՝ ուղղված հիմնական շահակիցներին, ՋԼՄ-ներին և հանրությանը: Ինֆոգրաֆիկները կարող են ներառել՝
 - առաջատար 5 մշակաբույսերը,
 - վերջին 5 տարում գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցած ամենամեծ տեղաշարժերը,
 - հետաքրքրական փաստեր, թե ինչպես է գյուղատնտեսությունն անդրադառնում ՀՀ տնտեսական աճի վրա,
 - ԳՀՀ - գյուղատնտեսության համառոտ ժամանակագրական հաշվարկ,
 - Ժողովրդագրություն, տնտեսություն, հիմնական ցուցանիշներ:
- Սոցիալական լրատվամիջոցների արշավ – մշակել և իրականացնել սոցիալական մեդիա արշավ ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալները տարածելու համար, օգտագործել տարբեր ձևաչափեր (օրինակ՝ ֆեյսբուքյան էջերը),
- Աուդիո լուրեր – հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով լուրերի հեռարձակում և հանրությանը մատչելի ներկայացում ՀՀ 2014 թվականի ԳՀՀ վերջնական արդյունքների հրապարակման մասին,
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների թողարկման իրադարձությունը, օժանդակ նյութեր և գործողություններ –ՀՀ 2014թ.ԳՀՀ արդյունքների հրապարակման համար կիրառվելու է հետևյալ մարտավարությունը. վերջնական/ամբողջական հրապարակում՝ 2016թ. դեկտեմբերին (ամսաթիվը որոշված չէ): Նախքան թողարկումն այս նյութերը կտրամադրվեն որոշակի հաստատված սահմանափակումներով/արգելքներով:

Ներքոնշյալ բոլոր մարտավարությունները կարևոր են արդյունքների հրապարակման և դրան հաջորդող ժամանակահատվածի համար: ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների թողարկման իրադարձության մարտավարությունները ներառում են.

- Տվյալների վերջնական/ամբողջական հրապարակման համաժողով – տվյալների հրապարակման օրը պետք է կազմակերպել լրատվական միջոցառում: Այն կվարի ՀՀ ԱՎԾ նախագահը: Ներկա կլինեն ՀՀ գյուղատնտեսության նախարարը, առանցքային այլ ղեկավարներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Համաժողովին ներկա գտնվելու համար կիրավիրվեն նաև այլ շահակիցներ, ինչպես օրինակ՝ արդյունաբերողների խմբեր, այլ հետաքրքրված խմբեր: Միջոցառումը կարող է հեռարձակվել հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, սոցիալական կայքերով և/կամ ՀՀ ԱՎԾ կայքով:
- ՀՀ ԱՎԾ մամուլի հաղորդագրություն – Տվյալների հրապարակման օրը մամուլի հաղորդագրություն է տարածվում՝ կարևորելով ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքները և

տվյալների կարևորությունը: Մամուլի հաղորդագրությունը նաև կարևոր տեղեկատվություն է տալիս, թե ինչպես պետք է գտնել արդյունքներն առցանց:

- ԶԼՄ-ների մշտադիտարկում – Մշտադիտարկման ենթարկել ԶԼՄ-ներում ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների հրապարակումը և դիտարկել նրանց միջոցով նախնական վիճակագրությանը հավելյալ արժեք հաղորդելու հետագա հնարավորությունը: Դա ՀՀ ԱՎԾ-ին կօգնի վստահ լինել, որ ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքները ճիշտ են հասնում հանրությանը, մասնավորապես նրանց, ում խիստ անհրաժեշտ են՝ քաղաքականություն մշակողներին, լրագրողներին, տեղական ինքնակառավարման մարմիններին, հետազոտողներին և այլն:
- ՀՀ 2014 թվականի ԳՀՀ տվյալների թողարկման ամփոփագիր/նյութերի հավաքածու մամուլի ասուլիսի համար – Հավաքածուն ներառում է.
 - մամուլի հաղորդագրություն,
 - ինֆոգրաֆիկա,
 - տեղեկատվական թերթիկներ,
 - հիմնական ուղերձներ,
 - մեկնարկային տեքստ ՀՀ 2014 թվականի ԳՀՀ մասին,
 - այլ նյութեր:
- Շահակիցների համագործակցության հետագա ընթացք – Գյուղատնտեսության ոլորտի առանցքային շահակիցների խմբերի հետ վերստին կապ հաստատելը կօգնի շարունակելու տարածել ԳՀՀ, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ հետազոտությունների, ծրագրերի և այլ տվյալների մասին տեղեկատվությունը սպառողների շրջանում: ՀՀ ԱՎԾ-ն նրանց հետ պետք է շարունակի համագործակցությունը: ՀՀ ԱՎԾ-ն պետք է շնորհակալություն հայտնի նրանց աջակցության համար և շարունակաբար տրամադրի հակիրճ տեղեկատվություն ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների վերաբերյալ: